ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
24	Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Սև գույնի: Կտորի գործվածքը «Ռիպստոպ» տեսակի, մակերեսային խտությունը՝ 195±5 գ/մ2, կտորը պոլիեսթերաբամբակային: Բաճկոնը միալանջ, թիկունքամասը ծավալուն՝ կտրվածքներով, գաղտնի կենտրոնական կոճկվածքով, կոճկվում է պաշտպանիչ կափույրի տակ թաքնված պլաստմասսե տրակտոր տիպի շղթայով: Բաճկոնն ունի 5-6 սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունա-կով օձիք: Օձիքը կանգնած վիճակում դրսից կոճկվում է 2.5 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղակայված են կրծքամասում, դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից հեռավորության վրա: Գրպանի լայնությունը՝ 14-15 սմ, երկարությունը՝ 13-14 սմ: Առաջամասի գրպանները կոճկվում են 2.0-2.5սմ կպչուն ժապավենով: Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են կպչուն ժապավենով: Թևքերի ծավալուն գրպանների կափույրների վրա մշակված են 3-3.5x9-9.5 սմ չափսերի, իսկ ձախակողմյան գրպանի վրա՝ 13-13.5x9.5-10.0 սմ չափսերի կպչուն ժապավեններ: Ձախ թևքի գրպանի վերնամասում 3-3.5x9-9.5 սմ չափսի կպչուն կտորի վրա ամրացվում է ՀԱԷԿ բառը, որը եզրակարված է բաց մոխրագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնագործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրաքանչյուր տառի բարձրությունը 1.5-2 սմ, լայնությունը՝ 1-1.5 սմ, բառի ընդհանուր երկարությունը 8-8.5 սմ: Տառաչափը կիրառել համաչափության կանոնով: Գրպանի ներքևի հատվածում ամրացվում է կպչուն կտոր, որի վրա 7սմ տրամագծով ամրացվում է ՀԱԷԿ-ի լոգոն (գունավոր): Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի

	նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0,5սմ լայնությամբ կարով: Կրծքամասի ձախ կողմում մշակված է 2,5-3սմ x 12,0-12,5սմ չափսերով կպչուն ժապավեն, որի ամբողջ երկայնքով կպչուն կտորի վրա ասեղնագործվում է ՌԵԺԻՄԻ ԲԱԺԻՆ բառը՝ եզրակարված բաց մոխրագույն մետաքսե թելով: Տառերը նույնպես ասեղնագործվում են բաց մոխրագույն մետաքսե թելով, յուրաքանչյուր տառի բարձրությունը 1.5-1.8 սմ, լայնությունը՝ 0.8 սմ, բառի ընդհանուր երկարությունը 8.5-9սմ: Տառաչափը կիրառել համաչափության կանոնով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալ-ներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են 2,5սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Բաճկոնի օձիքի ներքևի հատվածում մշակվում է լրացուցիչ դետալ, որի տակ տեղադրվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, որը կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը կոճկվում է նեյլոնե շղթայով: Առաջամասում կողքից, թեք ներկար-ված գրպաններ, 14-15 սմ բացվացքով: Գոտին մշակված է 6-7 գոտեմակօղակով: Տաբատի հետևա¬մա¬սում մշակված են կափույրով կտրված գրպաններ՝ երկու կոճակով կոճկ¬վող: Կողքերից մշակված են ուղղանկյուն կափույրով ծավալուն երկծալ վրադիր գրպաններ: Կափույրները կոճկվում են 2.5 x 4,5-5 սմ չափսերի երկու կպչուն ժապավեններով: Գրպանի լայնությունը 17-18 սմ, իսկ երկարությունը՝ 19-20 սմ, կափույրի լայնությունը 5,5-6սմ: Տաբատի առաջամասում մշակված են քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 17-20մմ տրամագծով, չորս կարանցքերով, գույնը՝ սև: Յուրաքանչյուր աշխատակցի համար պահանջվում է անհատական կար: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկեր, պարկի մեջ 5-6 լրակազմ, պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու քանակը, չափսերը Չափսը Քանակը 44/2 1 44/3 4 44/4 5 44/5 1 46/3 3 46/4 1 48/2 1 48/4 6 48/5 3 50/4 8 52/3 3 52/4 4 52/5 3 54/3 7 54/4 1 56/5 3 58/4 2

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱԷԿ-ԷԱՃԱՊԶԲ-178/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
24	